ժե.

Այսօր փեսան տիօտաթօին [ի Ջանթա] հրաւիրեաց ի ճաշ. գնացի։ Տաճկաց նաւերն լսեցաք թէ ի Մօթօն է, գնալոց են ի պաշարումն առ ի վրէժխնդրութիւն էփռաթօռի նաւուցն, զորս առեալք են զԲ նաւ բարբարոսքն, զմին ի մերձաւոր ժամանակիս, զնան տաճկի նաւերն, զի վե-րադարձուսցին զառեցեալ նաւսն էփռաթօռին. լուաք թէ բազումք հայք գոյն ի նաւսն, որք եկին ի վէնէտիկ։ (Միքայէլ վ. Սեբաստացի առ Մխ. Աբբայ. 1725 *Յուլիս* 23 [*Զանթա*])։

ժզ.

Զգիրն զայն որ ի մայիսի 15 *գրեալ էիր էհաս ինձ, յուլիսի* 7. 1725. *և եստ. վերապատուելի Պօղոս վ. և ծանեայ զգրեալսն ի նմին. այսինքն զառաքիլն վերապատուելի Միքէէլի վարդապետի և յետոյ վերապատուելի Ստեփանոսի վարդապետի և զչորից անձանց ի Հռոմ գնալն, և խաղաղու-թեամբ ի վանս դառնալն, և տէր խաղաղութիւն պարգևեսցէ. նաև զչինիլն վանուց և զնորոգիլն որմոց պարտէզի և զայլս բանս աշղմանց մենաստանին և յոյժ ուրախացայ...։ Ի կողմն կարմիր գլխոյն կարի յոյժ խռովութիւն գոն և վրդով ընդ ճերմակ գլխոյն. և ոմանք ասեն հայք ևս ընդդէմ եղեալ են ճերմակ գլխոյն, և այս ոչ է փոյթ մեզ այնքան ով տէր իմ, բայց ցաւն խեղճ ազգին մերոյ աճէմի են մեծագունեղ, զի զգերեալս կանայս, և աղջկունս և մանկունս հազարներով բերել ոչ դադարին այսր, և այլ տեղիս տանիլ ոչ նուազին...։ Նաև այժմ ճերմակ գլուխն ՃԲ հազար ձիի միս ուտող բերաւ այսր, և յղեաց ի կողմն կա(ր)միր գլխոյն։ (Պետրոս վարդապետ* 1725. *յուլիս* 25 [*առ Մխիթար?*]) [*տեղի?*]։

ժէ.

Իսկ վասն զբաղմանց չինուածոյն և առաքման քարոզչացն հայցեմ ի Տեառնէ՝ տալ զերջանիկ եզերումն։ Յարութիւն արքեպիսկոպոսն ԺԵ օր է որ ի Հռոմայ չւեաց, և կարծեմ թէ այժմ հա-սեալ կայ ի տեղդ։ (Յօհան Եպս. Սեպաստիոյ [առ Մխիթար] 1726. *յունիս* 15, *ի ֆօնբէսիւրն* [*Հռովմ*])։

ժը.

Կարի սաստիկ է և կանուխ սկսաւ, ի Լուսաւորչէ ի վեր մինչև ցայս ժամ օր ըստ օրէ սաստ-կանայ [մահտարաժամ]...։ Նաև ի բազում տեղիս տարածեալ է, թէ յԱնդրիանուպօլիս, թէ յիզմիր, թէ ի Պուռսայ և ի յայլս շրջակայս, ուստի դաղմատացիք, յոյնք, նաև հայք, հրէայք և տաճիկք ի հեռակայ տեղիս փախեալք, անդէն ևս ըմբռնեալք։ Բոլոր պալատից դրունքն փա-կեցեալք. միայն փոքրիկ ծակ մի թողեալք, անդէն տուրևառութիւն խօսից և թղթոց լինի։ Ճէրմակ լաթին պալատն ևս անկեալ է ժանտամահն։ Յառաջ քան զայս երկիցս անգամ, երկերկու օր մեծ որոտմունք և հեղեղ անձրևք եղեն. մինչ զի ի տեղիս տեղիս մարդիք ևս խեղդեցան, և բազումք ասացին թէ ի յամառնային ժամանակին այսպիս անձրև չեմք տեսեալ, վասն որոյ ասեն ոմանք թէ յայսմանէ պատճառեալ զոլ մահն։ (Հ. Միքայէլ վ. Սեբաստացի առ Մխ. Աբբայ. 1726 *Օգոստ.* 3, *Կ. Պոլիս*)։

ժթ.

Ի հեծելազօրացն հարցանիցէ տէրութիւն քո՝ բազում անց և դարձ գոյ, բայց մին գլխաւոր կռիւ ոչ գո(յ), բայց միայն Սըղնախի հայերուն միջտ վանան [?] մին փոքր սըղնախ առին, մին